

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԼՂՀ ֆինանսների նախարարության 2015 թվականի սեպտեմբեր ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

Ընթացիկ աշխատանքներ

Նախնական տվյալներով 2015 թվականի ինն ամսվա ընթացքում ԼՂՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 21528.9 մլն դրամ՝ պլանավորված 21500.0 մլն դրամ ցուցանիշը գերակատարելով 0.1 %-ով կամ 28.9 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 6.9 %-ով կամ ավել 1397.5 մլն դրամով:

Սեպտեմբեր ամսում ԼՂՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 3207.2 մլն դրամ կամ պլանավորված 3500.0 մլն դրամ ցուցանիշի 91.6 %-ը, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը գերակատարվել է 12.7 %-ով կամ ավել 361.6 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) են թվով 82 տնտեսավարող սուբյեկտ և լուծարվել (հաշվառումից հանվել)՝ 5 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել են 26 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել է 33.9 մլն դրամ: Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 113 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 51-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 34-ը՝ ապրանքների շրջանառության և ծառայությունների մատուցման ծավալների, ինչպես նաև իրացման փաստացի գների չափագրման, 6-ական՝ գործունեության չծավալման և ակցիզային դրոշմանիշների շարժի ու դրոշմավորման կանոնների պահպանման, 5-ը՝ ապրանքանյութական արժեքների մնացորդի ճշտության և 11 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ներկայացվել 3 վարչական գործ՝ 30.0 հազ. դրամ գումարով, ավարտվել՝ 2 վարչական գործ, որով բավարարված գումարը կազմել է 21.6 մլն դրամ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 82 վարչական գործով սահմանվել է 1.0 մլն դրամ վարչական տուգանք:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել են 4889 հաշվարկ-հաշվետվություն, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով ընդունվել են 525 գրանցման հայտ և 2783 եկամտային հարկի հաշվարկ:

Էլեկտրոնային հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 38 պայմանագրեր:

Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման գործընթացի շրջանակներում կատարվել է վերադարձ 22 վարձու աշխատողի՝ 2.1 մլն դրամի չափով:

Հաշվետու ամսում ԼՂՀ կառավարության և Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացվել ««Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը:

ԼՂՀ կառավարության կողմից հաստատվել է «Անմիջական արտադրող կամ անմիջական ներմուծող չհանդիսացող պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ իրացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների դրոշմավորման» կարգը:

Ֆինանսների նախարարի հրամանով փոփոխություն է կատարվել «Հարկային մարմին հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու մասին» պայմանագրի օրինակելի ձևում:

ՀՀ և ԼՂՀ հարկային մարմինների միջև իրականացվել են անուղղակի հարկերի հաշվանցումների համար հիմք հանդիսացող փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների ղեկավարների հետ կազմակերպվել է 1 խորհրդակցություն:

Հասարակայնության հետ կապ

Հաշվետու ամսում հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կազմակերպվել են 235 տնտեսավարող սուբյեկտների ընդունելություն, որոնց արդյունքում պարզաբանվել են վերջիններիս հուզող հարցերը:

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

Պատրաստվել և զանգվածային լրատվամիջոցներին է ներկայացվել 1 հայտարարություն:

Հաշվետու ժամանակահատվածում հարկային մարմին է մուտքագրվել 226, ելքագրվել՝ 175 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի: